

Հաստատված է
ՀԱԱՀ գիտական խորհրդում
,, 03 ,, 06 2021 թ.
(արձանագրություն № 11)



ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

«ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՂԱՎԱՅԻՆ ԱԳՐԱՐԱՅԻՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ» ՀԻՄՆԱԴՐԱՄՈՒՄ ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ ԹԵՍՏԱՅԻՆ ՔՆՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԻՐԱԿԱՆԱՑՄԱՆ

1. Ընդհանուր դրույթներ

1. Սույն կանոնակարգով, այսուհետ՝ Կանոնակարգ, սահմանվում է «Հայաստանի ազգային ագրարային համալսարան» հիմնադրամում, այսուհետ՝ Համալսարան, էլեկտրոնային թեստային քննությունների կազմակերպման և արդյունքների բողոքարկման գործընթացը:
2. Էլեկտրոնային թեստային քննությունների նպատակը բոլոր կրթական ծրագրերով սովորող ուսանողների ուսումնառության արդյունքների օբյեկտիվ և թափանցիկ ստուգումը և գնահատումն է:

2. Էլեկտրոնային թեստային քննությունների կազմակերպման ընթացակարգ

1. Ուսանողի ուսումնառության արդյունքների գնահատումն իրականացվում է կիսամյակային քննաշրջանի միջանկյալ ու ամփոփիչ քննությամբ՝ առկա ուսուցման դեպքում և միայն ամփոփիչ քննությամբ՝ հեռակա ուսուցման դեպքում՝ ըստ Ուսումնական գործընթացի կառավարման վարչության կողմից հաստատված ժամանակացույցի:

2. Միջանկյալ և ամփոփիչ քննություններն ու դրանց վերահանձնումները կազմակերպվում և անցկացվում են Համալսարանի Գնահատման և թեստավորման կենտրոնում:
3. «Մաթեմատիկա», «Ֆիզիկա», «Քիմիա» առարկաների հանձնման համար հատկացվում է 90 (իննսուն) թույլ, մյուս առարկաների համար՝ 60 (վաթսուն) թույլ:

(3-րդ կետը փոփ. 03.06.21թվականի Համալսարանի Գիտական խորհրդի որոշում)

4. Էլեկտրոնային թեստային քննությունները կազմակերպում է Տեղեկատվական տեխնոլոգիաների կենտրոնը, այսուհետ՝ ՏՏ կենտրոն, որը նաև էլեկտրոնային թեստային քննությունների տեխնիկական պատասխանատուն է:
5. Ուսանողը քննական կենտրոն պետք է ներկայանա քննության մեկնարկից առնվազն 10 թույլ առաջ: Դեկանատի ներկայացուցչի ներկայությունը քննական կենտրոնում պարտադիր է մինչև քննության մեկնարկը:

(5-րդ կետը լրաց. 03.06.21թվականի Համալսարանի Գիտական խորհրդի որոշում)

6. Ուսանողների մուտքը քննասենյակ սկսվում է ՏՏ կենտրոնի ներկայացուցչի հրահանգով: Ամբիոնի վարիչի թույլտվությամբ, կախված քննական առարկայից, ուսանողը քննասենյակում իր մոտ կարող է ունենալ գրիչ, մաքուր թուղթ, հաշվիչ և քիմիական տարրերի պարբերական աղյուսակ:
7. Քննության մեկնարկից առաջ ՏՏ կենտրոնի ներկայացուցիչը կամ հսկիչը ուսանողներին ներկայացնում է քննության ընթացքում սույն կանոնակարգով սահմանված իրենց իրավունքներն ու պարտականությունները:
8. Քննության սկիզբն ու ավարտը ՏՏ կենտրոնի ներկայացուցիչը հստակ սահմանում է: Քննությունից ուշացած ուսանողներին քննության համար հավելյալ ժամանակ չի տրամադրվում: Քննությունը բոլորն ավարտում են սահմանված ժամին:
9. Քննության սկիզբը հայտարարվելուց հետո ուսանողների ելքը քննասենյակից արգելվում է: Քննության ընթացքում քննասենյակից ուսանողը կարող է դուրս

